

Ատենագրութիւն

Ս. Խաչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ

Տարեկան Անդամական Ժողովի

Ժողովը գումարուեցաւ 14 Փետրուար 1981, Շաբաթ երեկոյ David and Mary Thomson վարժարանի սրահին մէջ: 2740 Lawrence Ave. E., Scarborough, Ont. ժամը 8:00ին, 96 քուէարկու անդամներու ներկայութեամբ, ծխական Խորհուրդի Ատենապետ Պր. Արմէն Քիւրքճեան ժողովը օրինաւոր յայտարարեց: Ժողովը բաց-
ւեցաւ, ժողովի նախագահ՝ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Յուսիկ Քհնյ. նշանեանի աղօթքով:

Ձեռամբարձ քուէով դիւանի անդամ ընտրուեցան՝

Ատենապետ Պր. Կարօ Խապայեան

Ատենադպիր Օր. Անի Քէրամէթլեան

Ատենադպիր Տիկ. Տիանա Հանրմեան

Պր. Կարօ Խապայեան, դիւանի անունով, իրենց ցոյց տրուած վստահութեան
համար ժողովականներուն շնորհակալութիւն յայտնեց:

27 Յունուար 1981 թուականին անդամներուն ուղղարկուած ժողովի օրա-
կարգը ներկաներուն ձեռամբարձ քուէարկութեամբ իւրացուեցաւ:

Տիկին Տիանա Հանրմեան կարդաց նախորդ տարուայ ատենագրութիւնը: Պր.
Մուշեղ Շահնազար առաջարկեց որ ատենագրութիւնը վաւերացուի: Տօքթ. Վահէ
Սվաճեան երկրորդեց: Ատենագրութիւնը առանց փոփոխութեան ընդունուեցաւ:

Ժողովը ընթացաւ օրակարգի նիւթերու թուային կարգով:

Արժանապատիւ Տէր Յուսիկ Քհնյ. նշանեան կարդաց իր տարեկան տեղեկա-
տուութիւնը - կցեալ այս ատենագրութեան - :

Ծխական Խորհուրդի տարեկան տեղեկատուութիւնը կարդալէ վերջ, Պր. Ար-
մէն Քիւրքճեան որպէս յաւելեալ տեղեկութիւն՝ ժողովականներուն յայտնեց, թէ

Վեհափառ Հայրապետը 15 նոյեմբեր 1980 թուակիր սրբատառ կոնդակով հաստատած է Գանատայի Հայաստանեայց Եկեղեցւոյ անջատ թեմը եւ միաժամանակ Գերշ. Տէր Թորգոմ Արք. Մանուկեանի պարտականութիւն տուած է թեմի կազմակերպչական աշխատութեանց սկսիլ: Այս նիւթին առնչութեամբ Առաջնորդ Սրբազանը, Գանատայի Հայաստանեայց Եկեղեցիներու Հովիւները, ծխական Խորհուրդներու Ատենապետները եւ թեմական Պատգամաւորները 21 Փետրուար 1981ին, Թորոնթօ Ս.Շրրորդութիւն Եկեղեցւոյ մէջ խորհրդակցական ժողովի մը հրաւիրած էր:

Տօբթ. նուպար Ալեանաք այն մտահոգութիւնը յայտնեց թէ բաժանումը հաղորդող կոնդակը հակադասութիւն չէ՞ր Վեհափառ Հայրապետի փափաքին՝ թէ նիւ Եօրքի Առաջնորդի հովանաւորութեանը տակ պիտի ըլլար կազմակերպչական աշխատանքները: Եւ որքա՞ն պիտի տեւէր իսկական բաժանումի իրականացումը:

Պր. Խապայեան ՝Մարմարա՝ օրաթերթին մէջ արտասուցուած Վեհափառ Հայրապետի կոնդակէն մէջբերումներ ըրաւ, ուր ՝անյապաղ՝ եւ ՝անմիջական՝ բաները գործածուած էին: Աւելցուց ըսելով թէ՝ Տօբթ. Ալեանաքի մտահոգութիւնները Խանտեղի էին:

Տէր Յուսիկ Քինյ. նշանեան խօսք առնելով ըսաւ թէ՝ բաժանումը անուանական էր եւ կատարուելիք հսկայական աշխատանք կար:

Տիկին Թէֆոն Քէօզկէրեան խօսք առնելով ըսաւ թէ՝ ինքը կը ձայնակցէր Տօբթ. Ալեանաքի, բաժնելով անոր մտահոգութիւնները: Յայտնեց թէ 1980 Հոկտեմբերին, իր Ս. Էջմիածին այցելութեան առթիւ, Վեհափառ Հայրապետին հետ տեսակցութիւն մը ունեցած էր որուն ընթացքին, նորին Սրբութիւնը ըսած էր, թէ Գանատայի բաժանման հարցը ամէնաուշ մինչեւ 1981ի վերջաւորութեան լուծուած պէտք է ըլլար: Թէեւ Թորգոմ Արք. Մանուկեան մինչեւ 1982ի վերջը նախատեսած էր բաժանումի իրականացումը:

Պր. Արմէն Քիւրքեան տուրքի հարցով որպէս յաւելեալ տեղեկութիւն ըսաւ թէ, Revenue Canada էջ ստացուած նամակի պատճէնը առ ի գիտութիւն

դրկուած էր թէ Առաջնորդարան եւ թէ Գանատայի քոյր եկեղեցիներուն:

Պր. Հրանդ Հանչերեան հարց տուաւ, թէ Ս. Խաչի գոյավիճակը ինչո՞ւ կրնար վտանգուիլ եթէ նիւ Եօրք տուրք դրկուէր:

Պր. Կարօ Խապայեան կարդաց Revenue Canada էջ ստացուած նամակը:

Պր. Յովհաննէս Գուլոմճեան ըսաւ, թէ Առաջնորդարան դրամ կարելի է դրկել եթէ ատիկա ի փոխան ``սէրվիս``ի է:

Պր. Ժիրայր Հանրմեան խօսք առնելով ըսաւ թէ՝ եթէ Առաջնորդարանը ``տուրքի`` տեղ դրամը ``ծառայութեան փոխան`` պահանջէր, ստանալու իրաւունք կ'ունենար:

Պր. Արմէն Քիւրքճեան անդրադարձաւ Մօնթրէալի մէջ լոյս տեսնող ``Ապագայ`` թերթէն անստորագիր յօդուածի մը: Ըսաւ, թէ յեղադիւրուած էր այն իրողութիւնը թէ՝ ``Սուրբ Խաչ``ը եկեղեցական հաստատութիւն մը չէր: Ինք շեշտեց թէ Ս. Խաչ որպէս ``եկեղեցի`` արձանագրուած էր եւ իւրաքանչիւր եկեղեցի տուրքէ զերծ Tax deductible ստացազիր կարենալ տալու համար կ'արձանագրուէր նաեւ որպէս բարենպաստակ հաստատութիւն կարդաց Ս. Երրորդութեան եւ Սուրբ Խաչի ստացազիրներէն օրինակներ: Այդ զըրիւթիւնը պատրուակ մըն էր որպէսզի Գանատական թեմական հարցերու լուծումը ձգձգուէր:

Ժխական Խորհուրդի տեղեկատվութիւնը ընդունուեցաւ զնահատանքով:

Տօքթ. Նուպար Ալեանաք կարդաց Ս. Խաչ Ազգային Ամենօրեայ Վարժարանի Հոգաբարձութեան տեղեկատվութիւնը:

Տիկին Նոյեմի Քէլէշեան կարդաց Եկեղեցասէր Տիկնաց Միութեան տեղեկատվութիւնը:

Պր. Գրիգոր Գազանճեան կարդաց Կարգ Դասու տեղեկատուութիւնը:

Պր. Խաչիկ Խոթանպուլեան կարդաց Երիտասարդաց տեղեկատուութիւնը:

Վերոյիշեալ տեղեկատուութիւնները վաւերացուեցան զնահատանքի արտայայտութեամբ:

Պր. Գոլյումճեան առաջարկեց որ նիւթական տեղեկատուութիւնները չկարգա-
դացուին, քանի որ իւրաքանչիւր անդամ այդ հաշիւները իր առջեւ ունէր եւ
միայն լուսաբանութեան համար հարցումներ հարցուէր:

Պր. Գոլյումճեան թելադրեց որ յառաջիկային տեղեկատուութիւններուն
Balance Sheet մը կցուի, որպէսզի անդամները եկեղեցւոյ եւ վարժա-
րանի նիւթական վիճակին մասին աւելի յստակ գաղափար մը ունենան:

Ծխական Խորհուրդի Ատենապետը խոստացաւ, թէ յաջորդ տարի
մը պիտի պատրաստուի եւ աւելցուց որ արդէն իսկ եկեղեցւոյ եւ յարակից մար-
միններուն գոյքերուն ցանկը պատրաստուած է:

Տիկին Սեդա Պետրոսեան մատնանշեց, թէ վարժարանի հաշուէտուութեան մէջ
Գարնանային Պարահանդէսի ծախսերը ցոյց տրուած էր եւ ուզեց զիտնալ թէ մուտ-
քը ի՞նչ էր:

Հոգաբարձութեան զանձապահ Պր. Մարտիկ Տէմիրճիեան տեղեկացուց, թէ հաշ-
ւէտութիւնը 1 Յունիս 1979էն մինչեւ 31 Յունիս 1980ի շրջանը կը պարփակէր
եւ մինչեւ այդ թուական Մայիսի պարահանդէսի հաշիւները զոցուած չըլլալով
ցոյց չէ տրուած:

Պր. Գոլյումճեան ծայնակցեցաւ Տիկին Ս. Պետրոսեանի եւ թելադրեց որ
յաջորդ տարի 1 Յունիսէն մինչեւ 31 Դեկտեմբերի շրջանն ալ տեղեկատուութեան
աւելցուի:

Տօքթ. Նորայր Ժէյլանլը կարդաց հաշուէքննիչ յանձնախումբի տեղեկատու-
ութիւնը:

Ծխական Խորհուրդի եւ Հոգաբարձութեան հաշուէտուութիւնները միաձայնու-
թեամբ վաւերացուեցան:

Ծխական Խորհուրդի 1981 տարուայ նախատեսեալ հաշուէկշիռը վաւերացուե-
ցաւ:

Տօքթ. Նորայր Ժէյլանլը, եկեղեցւոյ շէնքի շինութեան յանձնախումբի ա-
նունով, տարուած աշխատութիւններու մասին տեղեկութիւն տուաւ:

Ջանազան գաղափարի փոխանակութիւններէ վերջ Պր. Գուլյումճեան առաջարկեց որ անդամական ժողովին կողմէ շինութեան յանձնախումբ մը նշանակուի որով մաս կազմեն նաեւ ծխական Խորհուրդի մի քանի անդամները եւ փոխանակ որեւէ տեղ վարձելու, ծուխը իր տեղը գնէ:

Պր. Պերճ Գըրմըզեան, Պր. Գուլյումճեանի առաջարկին բարեփոխութիւն մը առաջարկեց ըսելով թէ նախկին յանձնախումբը իր պարտականութիւնը շարունակէ եւ եկեղեցի մը կամ եկեղեցի շինելու յարմար հող մը գտնէ:

Բարեփոխութիւնը միաձայնութեամբ ընդունուեցաւ:

Ժողովի Ատենապետը, Ընտրողական Յանձնախումբի Ատենապետը հրաւիրեց Ընտրողական Յանձնախումբի տեղեկատուութիւնը ներկայացնելու:

Պր. Մուշեղ Շահնազար կարդաց թեկնածուներու ցանկը:

Ժողովի Ատենապետ Պր. Կարօ Խապայեան, հրաւիրեց Ընտրողական եւ Հաշուէքըննիչ Յանձնախումբերը ժողովը վարելու:

Հետեւեալ անձերը նշանակուեցան որպէս քուէախոյզ մարմին:

Տիկին Մատլէն Այնաճեան

Տիկին Երջանիկ Չէօմլէքճեան

Պր. Արաքել Գոմպըլըքեան

Պր. Ժիրայր Թորիկեան

Պր. Կարպիս Թումաեան

Տօքթ. Մանուէլ Սազարեա

Քուէարկութեան սկսելէ առաջ, քուէարկութեան անդամներու թիւը 134 ըլլալով ճշդուեցաւ:

Ընտրութիւններու համար գաղտնի քուէարկութիւն կատարուեցաւ:

30 վայրկեան դադարէ մը վերջ ժողովը վերագումարուեցաւ:

Նոր հարցերու ընթացքին Պր. Վազգէն Քէրամէթլեան առաջարկեց անդամարշալի յանձնախումբ մը կազմել.

Առաջարկը ընդունուեցաւ:

Յանձնախումբը կազմուեցաւ հետեւեալներէ՝

Պր. Պերճ Գըրմըզեան

Պր. Մակար Գուգուեան

Պր. Վազգէն Քէրամէթլեան

Ընտրողական Յանձնախումբը ներկայացուց ընտրութիւններու արդիւնքը՝

Ծխական Խորհուրդի ընտրուած յայտարարուեցան հետեւեալ ցանկի առաջին

չորսը:

Պր. Լեւոն Զէօմլէքճեան	121
Պր. Ղեւոնդ Շահմելիքեան	117
Տիկին Շաքէ Շահնազար	114
Պր. Մինաս Հաճէթեան	112
Պր. Հրանդ Հանչէրեան	25

Ընտրողական Յանձնախումբի ընտրուած յայտարարուեցան հետեւեալ ցանկի առաջին հինգը

Պր. Եփրեմ Իսթանպուլ	116
Պր. Ռուբէն Գօճատէմիրճի	111
Պր. Վազգէն Քէրամէթլեան	109
Տիկին Ազնիւ Պաղտատլեան	104
Պր. Կարապետ Պառաւեան	88
Պր. Պերճ Գըրմըզեան	72

Պր. Մարտիկ Պուլկուրեմէմէզ անձնական պատճառներով թեկնածութիւնը ետ քաշած ըլլալով, հետեւեալները Հաշուէքննիչ Յանձնախումբի ընտրուած յայտարարուեցան:

Տօքթ. Նորայր Ժէյլանլը	
Պր. Յարութիւն Սահակեան	
Տիկին Մատլէն Օլթաճեան	

Ընտրութեան ընթացքին յաջորդ առաւելագոյն քուէ ստացողները ըստ կանոնագրութեան յօդուած 14-Գի յայտարարուեցան անձնափոխանորդ:

Օրակարգի նիւթերը սպառած ըլլալով ժողովը փակուեցաւ Տէր Հօր աղօթքով ժամը 1:20 (կէս գիշերին):

Անի Քերամէթեան

Անի Քերամէթեան
Ատենադպրուհի

Տիանա Հանրմեան

Տիանա Հանրմեան
Ատենադպրուհի

Կարօ Խապայեան

Ատենապետ

Կ. Խապայեան

Տէր Յուսիկ Բնյ. Նշանեան

Տէր Յուսիկ Բնյ. Նշանեան

Նախագահ